նելով լայնականը, որի հետևանքով այն ընկալվում է ոչ թե իբրև աղոթատուն, այլ շքեղ հանդիսասրահ:

Գավթի արևելյան լուսամուտից վեր, ճակտոնաքիվերի տակ, գառը ճանկերում երկգլխանի արծվաքանդակն է (ինչպես և գյուղամիջի եկեղեցու հին մասի վրա), որն ընդունված է իբրև Մամիկոնյանների զինանշան:[85]

Թե երբ է հիմնադրվել գավիթը՝ տեղեկացնում է 1969 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված մի արձանագրություն, ըստ որի, *ի ժամանակի, յորում տիրեց թաթարն չորից ծագած երկրի . . . սկիզբն շինութեան տանս եղեւ:* Ստույգ հայտնի է, որ Գուգարքը (Լոռե բերդաքաղաքը) թաթարները նվաճել են 1236 թ. հունիսի 30-ին, հետևաբար Բարձրաքաշի վանքի գավթի շինարարությունն սկսվել է 1236 թ. մայիս-հունիս ամիսներին: Իսկ թե ո՞ւմ կողմից՝ չի նշված: Բայց քանի որ այդ ժամանակ եռանդուն գործունեությամբ աչքի էին ընկնում Մարծպանի որդիներ Ասլանբեկն ու Գրիգորը, ինչպես և Գորգի տղա Աշոտը, ուստի նրանց էլ պիտի վերագրել այս գործի պատիվը, որոնց առնչումների մասին կան մի շարք արձանագրություններ: Ակտիվ մասնակցություն են ցուցաբերել կանայք:

Դատելով արձանագրությունների անուղղակի տեղեկատվությունից, գավթի կառուցումն ավարտվել է 1246-1247 թթ.:

Բարձրաքաշի վանքը հարուստ է դարաշրջանին բնորոշ հարդարանքի ճոխ տարրերով և այս առումով պատվավոր տեղ ունի Հառիճավանքի, Մակարավանքի, Նոր Վարագավանքի, Դեղձուտի, Գանձասարի, Խորակերտի վանքերի փայլուն համաստեղության բույլում:

Ս. Հարություն մատուռը (Ագռավի տապան) գտնվում է Սիրուն Խաչից վանք տանող ոտնուղու միջնամասում: Ճարտարապետական ձևերով հարում է Հաղբատի եռախորան հուշարձանին, ուր փոքրիկ խորանաձև կառույցի վրա տեղադրված է եղել խաչքար: Այն շինվել է 1234 թ. *ի բարեխաւսութիւն վարդապետին Յովանիսի ... յիշխանութեան Մեծին Մարծպանա:*

Ս. Հարությունից հեռու չեն 1266 թ. Գորգ վարդապետի միջոցներով, Մարծպանի[86] որդիներ Վահրամի և Մամիկոնի պարոնության ժամանակ շինված ծիքհանի ավերակները:

ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ

Գտնվում է Դսեղից արևմուտք, լեռնապարի տակ, Դեբեդի աջափնյա լանջի վերին եզրում, Տախտ (թախտ, տափարակ) վայրում: Բանավոր խոսքում և գրականության մեջ գործածական է Քառասնից վանք, Քառասնից մանկանց վանք անվանումը, իսկ վիմագիր արձանագրություններում՝ վանք, սուրբ ուխտ, եկեղեցի, սուրբ Քառասնիցս, անգամ՝ սուրբ Քառասունքս:

Վանքի վիմագրերում հաճախ է վկայվում *զամեն եկեղեցիքս* արտահայտությունը, որը խոսում է այնտեղ մեկից ավելի աղոթարան լինելու մասին, թեև տեղում այժմ մեկն է պահպանվում՝ ԺԳ դարում կառուցվածը: 912 թ. գրված «Ճառընտիրի» հիշատակարանի

---

[85] Գառը մագիլների մեջ արծվաքանդակի խմբապատկերը մեզ մոտ հանդես է եկել Ժ դարում (Անի, Ցաղաց քար, Խորանաշատ, Գեղարդ, Եղվարդ, Նորավանք), բայց բոլոր դեպքերում թռչունները միագլուխ են:

[86] Այս Մարծպանը, ակներևաբար, վանքը կառուցող Մեծ Մարծպանը չէ, որը չի ունեցել Վահրամ անունով որդի:

գրչի խոստովանությամբ՝ փնտրտուքներ կատարելիս, այլ մատյանների հետ «Գտի և զՍրբոյն *Յմաեկի* զվկայաբանութիւն քառասուն արամբք ի տանն Տայոց, որ այժմ *Քառասունի* վանք կոչի»:[87] Որքան հայտնի է, այս անվամբ միակ վանքը Դսեղինն է, և այն, պարզվում է, գոյություն է ունեցել առնվազն Թ դարից՝ իր գրչատնով ու մատենադարանով:

Կրթամշակութային 1100-ամյա այս կենտրոնը ներկայումս ավերակ վիճակում է: Մնում են զույգ որմնամույթերով գմբեթասրահի կմախքը՝ խորանի կողերի կրկնահարկ ավանդատներով, գավթի ստորին շարքերից ու գերեզմանոցը:

Քառասնից վանքի եկեղեցու կառուցման արձանագրության մեջ գրված է ՈՂ – 1241 թ. *Դավիթս ընծա բերի եւ շինեցի զտունս* (աստծո տունը) Աշոտ Մամիկոնյանի իշխանության և Հովհաննեսի առաջնորդության ժամանակ:[88] Մի այլ արձանագրություն տեղեկացնում է. *ես՝ Խաչատուր, ծառայ Այ, շինեցի ժամատունս եւ սալեցի զեկեղեցիս,* որով ավարտվում է վանքի շինարարությունը, և 1256 թ. Հաղբատավանքի առաջնորդ Համազասպը[89] կատարում է նավակատիքն ու հիմնում միաբանություն: Այս հանդիսության ժամանակ արդեն մահացած էր Հովհաննեսը: Վերջինիս հաջորդել են Հայրապետը, Առաքելը, Գևորգ վարդապետը (1331 թ.): 1491 թ. գրված «Ավետարանի» հիշատակարանում Բարձրաքաշի-Քառասնիցի առաջնորդն էր Յովհաննես վարդապետը:

Դսեղ գյուղում և նրա շրջակայքում կան այլ հուշարձաններ ևս. եկեղեցիներ, մատուռներ, պատմական գերեզմանոցներ, բարձրարվեստ խաչքարեր, որոնց մեջ հանրահայտ են հատկապես Ամենափրկիչ խաչելության և Սիրուն խաչ խաչքարերը:

Վիմագիր պատառիկների և ձեռագրաց հիշատակարանների համաձայն, Բարձրաքաշ և Քառասնից վանքերը գործել են մինչև ԺԷ դ. վերջերը: Դրանք ավերվել են ԺԸ դ. նստվածքների ու սողքերի, երկրաշարժերի, մոտակա ժայռերի փլուզումների, անխնամության-անտերության պատճառով:

Վանական համալիրների փլատակները մասամբ պեղվել-մաքրվել են, սակայն հարկ է ավարտել աշխատանքները՝ հուշարձաններն ուսումնասիրելու, վերականգնման կամ ամրակայման դեպքում բեկորներն իրենց նախնական տեղերում դնելու մտահոգությամբ: Չի բացառվում վիմագրերի ի հայտ գալը:

Դսեղի տարածքի հուշարձանների վիմագիր արձանագրություններից սույն պրակում ամփոփված է 111-ը, որոնցից 55-ը հրատարակված են եղել անցյալում (Զալալյանց, Ե. Լալայան, Գ. Սարգսյան, Ս. Բասրխուդարյան, Ա. Շահինյան, Գր. Կարախանյան): Կոստանյանցի և Ոսկյանի արտատպությունները զուրկ են գիտական որևէ արժեքից, բայց նշվում են ըստ հարկի:

Թվագրված է 48 արձանագրություն, որոնցից հնագույնը 1213 թ. է, հետսագույնը՝ 1692 թ.:

---

[87] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 51:

[88] Այս Աշոտը ԺԳդ. առաջին տասնամյակներում մի շարք արձանագրություններում հանդես եկող Գաւրգեի տղան է, որն Աշոտ Դսեղցի է կոչվում Հոռոմայրի վանքին 1246 թ. առատ նվերների մասին գրված արձանագրություններում (ՎՏ, 90):

[89] Համազասպը Հաղբատավանքի ժամատունը և զանգակատունը կառուցողն է, վիճակի առաջնորդը: